նորդութեամբ՝ պայմանաւ առաջնութեան Պատրիարքին Յունաց, և 'ի տեղիս արտաքոյ նորին՝ որք յականէ եւ յանուանէ բացորոշ գրեցան, անկախութեամբ և առանց խառնութեան կատարել զուխտս, զի մի կողմն ճշմարիտ խոստովանութեամբ ստոյգ համարեցաւ զհրովարտակս միւսոյ կողմանն և ընկալաւ։ Եւ առաջին 'ի խնդրոց խառնութեան էր, սեփհական և բնակութեան տեղիքն 'ի Սուրբ Յարութիւն, և այնոքիկ ևս 'ի հրովարտակս երկուց կողմանց յականէ յանուանէ գրեալ են. հաճեցան երկաքանչիւր ազգ սեփհականութեան և անկախութեան տեղեաց 'ի տաճարին Ս. Յարութեան ըստ նախնի պայմանաց զորս ունէին յաւուրց անտի Սուլթան Սէլիմայ։ Եւ երկրորդն 'ի խնդրոց խառնութեան, Հայք պնդէին թէ 'ի սկզբանէ անտի Հապէշք, Ղպթիք և Ասորիք՝ մեզ հետեւողք և համազգային սահմանեալ են, Յոյնք ընդդէմ հրովարտակին հակառակեալ՝ թէ ինքեանց են հետեւող. սակայն հետեւակ յորջորջեալ ազգքն՝ նայելով յուխտաւորութիւնս եւ 'ի բացականութիւնս նոցին 'ի ժողովոյ, գրեցաւ հրաման առ Դատաւորն Երուսաղէմի՝ ստուգել զխնդիրն 'ի տեղւոջ իւրում. որպիսի եղանակաւ լեալ իցէ առաջին սովորութիւնն՝ այնպէս առնել, որոյ վասն հարկ եղեւ յանձն առնել 'ի տեղի իւրում, և այս ծանուցաւ երկուց կողմանց։ Եւ վերջին խնդիրն էր՝ զի խնդրէին Հայք 'ի տաճարին Ս. Յարութեան, որ նախ քան զայս այրեցաւ, զսեփհական և զբաժանորդ տեղիս, զորս յայտնապէս ունէին, զբաժանորդ տեղիս բաժանորդութեամբ եւ զսեփհական տեղիս անկախութեամբ չինել։ Սակայն վասն նորոգութեան և չինութեան ոչ ոք ունի իրաւունս լինել ձեռնամուխ, այլ միայն Թագաւորական բարձր կամեցողութեան սեփհական է, և ըստ ներելոյ Շէրիի օրինաց, յորժամ նորոգութեան պէտս ունի ըստ առաջին ձեւոյն, առ որ կամիմ 'ի հպատակաց Տէրութեանս՝ նմա յանձն առնելով կատարի. ուստի մի ոք համարձակեսցի ամբաստան լինել վասն չինութեան, զի յայսմ նուագի չինութիւնն տուաւ ազգին Յունաց, և ընդհանուր նորոգութիւնն նոցին ձեռամբ եղեւ, սակայն երկու ազգք չունին մրցումն և ըղյամառութիւն տիրելոյ գրաւելոյ զիւրաքանչիւր սեփհա-